Մինասի անունով արած կարգադրութեան մասին. այլ և զոհունակութիւն և օնհնութիւն յայտնուեց Ցանձնաժողովին, որ իւր կազմակերպութիւնից յետոյ զգալի օգուտ է ցոյց տուել 1905—1906 թ. թ. հայ-թրքական ընդհարումներից վնասուածներին ու թշուառներին: 18 մարտի, թ. 415:

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին պ. Սիմէոն Հայրապետեան Հախումեանցի Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի միջոցով ուղարկած հետևեալ ձեռագրերը: 1) Գրիգոր Տաթևացի, ամռան հատոր, 2) Մեկնութիւն Աւետարանի, ըստ Յովհաննու, XVII դարու թարգմանութիւն. 3) Մաշտոց XVII դարու. 4) Ատենի ժամագիրք տպուած XVII դարու (1642 թ.): 25 մարտի. թ. 441:

ՄԻՆՕՂԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ԲԱՂՈՒԱԾՆԵՐ

Մինասը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրական պատուէրի, որոշեց. թոյլ տալ Շամախու Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել և ձեռնադրել քհնյ. Դէօքչայի գաւ. Ադայիշէն գիւղի վրայ նոյն գիւղացի Աբեթնազով Թամրազեանցին: 26 փետրուարի, թ. 81:

Մինասը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի այս տարուայ փետրուարի 4-ի, № 305 յայտարարութիւնը, որոշեց. նախ՝ բացատրել նոյն Կոնսիստորիային, որ Հայ-լուսաւորչական գաւանութիւն ընդունած հրէաները կարող են նորից գաւանել իրենց գաւանութեան՝ համաձայն 1905 թ. ապրիլի 17-ի Բարձրագոյն հրովարտակի, և, երկրորդ, վերջապէս յիշեցնել Կոնսիստորիային, որ հրէաներին հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկն ընդունելիս լինեն խիստ զգոյշ և ամեն անգամ ստուգեն, թէ նրանք ներքին համոզմունքից դրդուած են գիմում քրիստոնէութեան, թէ ուրիշ նկատումներով: 26 փետրուարի, թ. 83:

Մինոզը որոշեց. հաստատել Մ. Աթոռի վանական կառավարութեան կատարած աճուրդը՝ Օշականի վանքապատկան «Դաշտ» հողերը կապալով տալու մասին, և թոյլ տալ վանական կառավարութեան նոտարական պայմանով տալ «Դաշտի» հողերը Օշականցի Բագրատ Խաչատրեանին տարեկան 800 ռուբ. վարձով, հինգ տարի ժամանակով, սկսած այս 1914 թ. յունուարի 1-ից մինչև 1919 թ. յունուարի 1-ը։ 26 փետրուարի, թ. 84։

Մինոզը որոշեց. համաձայն Հեհափառ Կաթուղիկոսի բանաւոր պատուէրի փոխադրել Տարօնում կառուցուելիք Պոպովեան վարժարանի շինութեան համար Տարօնի առաջնորդին 2000 ռուբլի Մինոզի գանձարանում այդ նպատակով պահւող գումարից։ 27 փետրուարի, թ. 86։

Թագուհի Կայսրուհու խնամատարութեան տակ գտնուող խուլերի և համրների Հոգաբարձութեան Կովկասի բաժանմունք խորհրդի այս տարուայ փետրուարի 24-ի գրութեան համաձայն Մինոզը որոշեց. պատուիրել Վրաստանի, Շամախու, Երևանի և Ղարաբաղի թեմական առաջնորդներին կարգադրել, այս տարուայ մարտի 22-ին թեմերի քաղաքների հայոց եկեղեցիներում գանձանակ շրջեցնել երեցփոխանների ձեռքով յօգուտ խուլերի և համրների և գոյացած արդիւնքն անմիջապէս փոխադրել Հոգաբարձութեան Կովկասի խորհրդի անունով։ 3 մարտի, թ. 97։

Մինոզը՝ լսելով Վաղարշապատի հասարակութեան հաւատարմատարների փետրուարի 27-ի յայտարարութիւնը, վանքի և գիւղի «Շահարխ» առուի նորոգութեան անհրաժեշտութեան մասին, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի վանական կառավարութեան գիւղացիների հետ միասին նորոգել «Շահարխ» առուն, հոգալով լինելիք ծախքի կէսը։ 5 մարտի, թ. 98։

Մինոզը՝ Ղարաբաղի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ Շուշիքենդ գիւղի համայնքին նորոգել գիւղի հանգստարանի մօտ գտնուող հին եկեղեցին, ծախսելով ըստ ներկայացրած նախահաշուի 2736 ռուբլի։ 5 մարտի. թ. 100։

Սինօդը՝ քննութեան առնելով Նոր-Բայազէտի գաւառի Ղշլաղ գիւղի Ղևոնդ քհնյ. Տէր-Մխիթարեանի մեղադրական գործը անվայել ընթացքի համար, որոշեց. հաստատել Երևանի կոնսիստորիայի որոշումը, որով անպարտ է ճանաչուած յիշեալ քահանան՝ նրան վերագրած յանցանքն ապացուցանելու համար զօրաւոր փաստեր չլինելու պատճառով: 7 մարտի, Թ. 106:

Սինօդը որոշեց. համաձայն մարտի 5-ին կայացած աճուրդի Ս. Աթոռին պատկանող Տայլար հողերը (Ղարսի շրջ.) 615 դես. տարածութեամբ տալ կապալով Աղէքսանդրոպոլցի Յարութիւն Մահտեսի Նազարեանին և Գէորգ Միքայէլեանցին փոխադարձ երաշխաւորութեամբ ինն տարի ժամանակով. սկսած այս 1914 Թ. յունուարի 1-ից մինչև 1923 Թ. յունուարի 1-ը, տարեկան 2200 ռ. վարձով, ստանալով կապալառուներից 1100 ռուբլի գրաւական, որ մնալու է Ս. Աթոռի գանձարանում մինչև պայմանաժամի լրանալը: 8 մարտի, Թ. 108:

Սինօդը՝ Երևանի նահանգ. Դատարանի Դատախազի առաջարկութեան համաձայն, քննութեան առնելով Աղէքսանդրոպոլի գաւառի Սուվանվերդի գիւղի Արշակ քհնյ. Տէր-Սարգսեանի մեղադրական գործը տեղի փոխ.-խնայողական ընկերութեան գումարները վատնելու համար, որոշեց. յայտնել յիշեալ դատախազին կարծիք, որ Արշակ քահանան մեղաւոր է պատժ. օր. 354 և 1155 յօդուածներով: 8 մարտի, Թ. 109:

Սինօդը՝ քննութեան առնելով Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու նախկին երեցփոխան Ս. Բաբաքեխեանի և Հ. Կառավարութեան քարտուղար Հ. Մելքոնեանի մեղադրական գործը, որոշեց. հաստատել Վրաստանի կոնսիստորիայի որոշումը և յանձնել Բաբաքեխեանին ու Մելքոնեանին մարմնաւոր իշխանութեան դատին առաջնին դրամական զեղծումների համար պատժ. օր. 354, իսկ երկրորդին կեղծիք կատարելու համար նոյն օր. 362 յօդ-

ուածներով, վերջնին անմիջապէս արձակելով պաշտօնից։ 10 մարտի, թ. 110։

Սինոդը՝ քննութեան առնելով Վաղարշապատցի Պողոս Մազեանի տեղի ս. Աստուածածին եկեղեցու համար քահանայ ձեռնադրելու վերաբերեալ գործը, և ի նկատի ունենալով, որ ընծայացուն պսակուել է այրի կնոջ հետ, որոշեց. մերժել Պողոս Մազեանի խնդիրը քահանայ ձեռնադրուելու մասին, որովհետև եկեղեցական կանոններով (Առաքել. կան. յօդ. Զ.։ Ղևտաց. գիրք ԻԱ—13, Եզեկիել ԽԴ—22, Առաքել. Բ. կանոն, յօդ. 16) այրի կնոջ հետ ամուսնացածը չի կարող քահանայ դառնալ։ 14 մարտի, թ. 114։

Սինոդը՝ քննութեան առնելով Զանգեզուրի գաւառի Ուզ գիւղի Առաքել քհնյ. Տէր Պողոսեանի մեղադրական գործը, որոշեց. ի նկատի ունենալով, որ յիշեալ քհն. հարբելու սովորութիւն է ունեցել և այդ վիճակում թոյլ է տուել իրեն մի շարք կոչմանն անվայել արարքներ, իսկ այժմ, զղջալով, թողել է այդ սովորութիւնը, բեկանել Երևանի Կոնսիստորիայի որոշումը Առաքել քահանային կարգալոյծ անելու վերաբերմամբ և ենթարկել նրան երեքամեայ եկեղեցական ապաշխարանքի Տաթևի վանքում։ 17 մարտի, թ. 120։

Սինոդը՝ լսելով Ղարաբաղի թեմական դպրանոցի Հոգաբարձութեան միջնորդութիւնը՝ Ղարաբաղի թեմում գտնուող վանքապատկան կալուածների կառավարութիւնը նոյն Հոգաբարձութեան յանձնելու և եկամուտը թեմի դպրոցական գործին յատկացնելու մասին, որոշեց. յայտնել նոյն Հոգաբարձութեան, որ Սինոդը առնելով իւր անմիջական տեսչութեան տակ թեմի կալուածների կառավարութիւնը, նորա օգտագործութիւնը կանոնաւորելու և նպաստաւոր պայմանների մէջ դնելու համար հոգացել և հոգ է տանում, միւս կողմից՝ Սինոդը դրազրութեան մէջ է Կովկասեան բարձր հշխանութեան հետ կալուածը-

ներում ապօրինաբար հաստատուած թուրք և քիւրդ թափառականներին հեռացնելու համար, և առհասարակ ընթացքի մէջ են կալուածքին վերաբերեալ մի շարք վիճելի հարցեր, որոնց Մինոզը ընթացք է տալիս։ Այնուամենայնիւ Մինոզը՝ կամենալով նպաստել Ղարաբաղի թեմի դպրոցական գործին, կալուածների կառավարութիւնը վերջնականապէս կանոնաւորելուց և բաւարար եկամուտ ստանալուց յետոյ հնարաւոր չափերով մասն կը հանէ թեմի դպրոցներին։ 19 մարտի, թ. 128։

Բարձրագոյն ներման արժանացած քահանաներ

Նորին Գայսերական Մեծութեան բարձրագոյն ներման են արժանացել և վերստին իրենց քահանայական և անհատական իրաւունքներն ձեռք բերել՝ Ազգիս Վեհափառ Հայրապետի միջնորդութեան համաձայն և Պետական Դումայի անդամ պ. Միքայէլ Պապաջանեանի աջակցութեամբ Շուշի քաղաքի երեք քահանաներ—Գարեգին աւագ քահանայ Տէր Յովհաննիսեան, Կարապետ քահանայ Վարդապետեանց և Արսէն քահանայ Հախումեանց։ Այդ քահանաները մեղադրւում էին հայ թուրքական ընդհարումների ժամանակ 1895—96 թ. Շուշու Ազուլեաց եկեղեցու մէջ պայթուցիկ նիւթեր գտնուելու պատճառով՝ որի համար դատուեցին և վերջին երեք տարին 1910 թ. նոյեմբերից մինչև 1913 թ. նոյեմբեր ամիսը նստած էին Շուշի քաղաքի բանտում, իրաւունքներից և քահանայական կոչումից զրկուած։